

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لويس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446

## Հայ Մարտիկ Հերոսներ Նվիրվում է Արմեն Հովհաննիսյանի հիշատակին



# 183, Հունվար 2014 թ. No 183, January 2014 شماره ۱۸۳ دی ماه ۱۳۹۲

# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Իրանահայ Համայնք.....	1
2- Հայաստան.....	2
3- Արցախ.....	6
4- Արեւմտյան Հայաստան.....	6
5- Միջազգային.....	14
6- Մշակույթ.....	15
7- Խոհեր.....	17
8- Գծանկարչություն.....	18
9- Հայերեն-պարսկերեն առաձանի.....	18

## Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-2
----------------	-----

**Շաբաթի առաջին էջում՝** Հայ Մարտիկ Հերոսները

**Վերջին էջում՝** Լույս է տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 183, հոբնվար 2014 թ.

No. 183, January 2014

ماهنامه لویس - شماره ۱۸۳ دی ماه ۱۳۹۲

# ԼՈՒՅՍ

## Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys\_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցե՝ www.louysonline.com

## LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Ed. Baghdasarian**

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys\_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

**Թերթի Գինը՝** Հատվածաճառ - 5000 ռիալ

**Բաժանորդագրություն՝**

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

պարտադիր է:

# Մարտակերտի 9 հերոսները



2014-ի հունվարի 19-ին Մարտակերտից ոչ հեռու՝ Զրաբերդի հենակետերի վրա ադրբեջանցի թուրքերի դիվերսիոն խմբի հարձակման և ջախջախման պատմությունը:

Հիշեցնենք, որ 2014 թվականի հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը՝ ժամը 23:50-ից մինչև 00:15-ի սահմաններում, արցախա-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծի հյուսիսարևելյան (Զրաբերդ) և հարավարևելյան (Կորգան) ուղղություններում արձանագրվել են հակառակորդի դիվերսիոն խմբերի ներթափանցման միաժամանակյա փորձեր:

Ադրբեջանցիները գիշերը հարձակվել են մեծ խմբով, սակայն Արմենը նկատել է դիվերսանտներին, զգուշացրել զինակիցներին և սկսել դիմադրությունը: Նույնիսկ ծանր վիրավոր վիճակում նա չի ընկրկել և շարունակել է դիմադրությունը: Դա հայկական ուժերին հնարավորություն է տվել արագ կազմակերպվել և դեն շարտել թշնամուն, պատճառելով մեծ քանակի կորուստներ:

Արցախի Հանրապետության զինված ուժերի առաջապահ ստորաբաժանումները, հավա-ստանշելով ադրբեջանական դիվերսիոն խմբերի գործողությունները, երկու ուղղություններում էլ անցել են կազմակերպված պաշտպանության և հակառակորդին պատճառելով զգալի մարդկային և նյութական կորուստ՝ հետ շարտել իր ելման դիրքերը: Բռնկված փոխհրաձգության արդյունքում հակառակորդի կողմից ստացած հրազենային վիրավորումից հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքում իր առջև դրված խնդիրը արիաբար կատարելու ժամանակ զոհվել է կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանը: Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հրամանով Արմեն Հովհաննիսյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: Այդ պարգևի ամենաբերտասարդ մեդալակիրն է:

**Իրանահայ Համայնք**

**Ատրպատականի հայոց թեմի գաւակներից՝ Վաստակաշատ Յակոբ Միքայէլեանը պարգևատրուեց շարժապատկերի ասպարէզում**



Երկուշաբթի 13 Յունար 2014-ի երեկոյեան, Թարիզի «Արեստի եւ Մշակոյթի Դահլիճ»ում տեղի ունեցաւ պարգևատրման յատուկ հանդիսութիւն, կազմակերպութեամբ Թարիզի Քաղաքապետարանի մշակութային բաժանմունքի, գնահատելու համար անցած 30 տասնամեակների ընթացքում, շարժապատկերի բնագաւառից ներս իր ներդրումը ունեցած արևեստագէտ Պրն. Յակոբ ՄՍՕսիկ Միքայէլեանին:

Վաստակաշատ Թարիզեցիին իր նւիրեալ ծառայութեամբ եւ արևեստի բնագաւառում ձեռք բերած յաջողութիւններով տարիների ընթացքում վայելել է պետական շրջանակների յարգանքն ու վստահութիւնը:

Սոյն հանդիսութեան ներկայ էին Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանը, ընկերակցութեամբ Թեմական Խորհրդի անդամներ՝ Տոքթ. Աշոտ Խզրիեանի, Պրն. Վարդան Աբրահամեանի եւ Պրն. Գագիկ Ջորջեանի: Հանդիսութեանը ներկայ էին նաեւ՝ Թարիզի քաղաքապետական խորհրդի մշակութային բաժանմունքի պատասխանատու՝ Ալեւի, կցորդ՝ Տաւոյ Յուշէնք, Փոքրամասնութիւնների Բաժանմունքի պատասխանատու՝ Հիւսէյն Մուսաւի, ֆիլմարևեստի եւ շարժանկարի բնագաւառում գործող անձնատրութիւններ, յատուկ հրաւիրեալներ եւ մշակութասէր մեծ բազմութիւն:

Բացման խօսքով Տաւոյ Յուշէնք ներկայացրեց առիթը, ինչպէս նաեւ ներկայ պատույ հիւրերին, շեշտելով հայ համայնքի դարատր ներդրումը երկրի բարգաւաճման գրեթէ բոլոր ոլորտներում: Ապա, Մշակութային Բաժանմունքի պատասխանատու Ալեւի ներկայացրեց օրայ մեծարեալին, անդրադարձալով նրա կենսագրական գծերին ու անցած երեք տասնամեակների ընթացքում նրա ծառայութեան շարժապատկերի մշակութային ասպարէզում: Ապա, գնահատանքի հանդիսատր պահին բեմ հրաւիրեց Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդը, յանձնելու համար գնահատագրերն ու յուշամետալները: Ներկայ օտար մեծ բազմութեան ծափողոյնների գնահատալից արտայայտութեան ներքոյ, Թեմակալ Առաջնորդը հայագի Պրն. Յ. Միքայէլեանին յանձնեց թէ՛ պետութեան գնահատագրերը, թէ՛ Առաջնորդական Օրհնութեան Գիրը, եւ թէ՛ պետական յուշամետալը: Յայտնենք, թէ Թեմական Խորհուրդը եւս, առ ի գնահատանք Պրն. Միքայէլեանի վաստակին, արծաթեայ խորհրդանշական նւեր յանձնեց նրան:

Նշենք, թէ Պրն. Յ. Միքայէլեանը անցած 30 եւ աւելի տարիների ընթացքում, Թարիզ քաղաքում շարժապատկերի բնագաւառում իր ունեցած ներդրմանը համար արժանացել է մշակութային տարբեր հիմնարկութիւնների մի շարք գնահատանքների: Իսկ սոյն հանդիսութեամբ, Թարիզի Քաղաքապետարանի Մշակութային Բաժանմունքի գնահատանքին արժանացաւ, իր ծննդավայր քաղաքի, ու Ատրպատականի Հայոց Թեմի անունն ու պատիւը բարձր պահելով:

**Ատրպատականի առաջնորդը հանդիսապետեց քրիստոսի ծննդեան տօնի Ս. Պատարագին՝ Ռահւա գիւղում**



Ուրբաթ 10 Դեկտեմբեր 2014-ի առաւօտուն, Ռահւայում Ս. Օննդեան տօնի առիթով Ս. եւ Աննահ պատարագ մատուցեց եւ Ջրօրհնէք կատարեց, ներկայութեամբ գիւղի հաստացեալ ժողովրդին:

Եկեղեցական արարողութեան հանդիսապետեց, Ջրօրհնէքը կատարեց եւ իր պատգամը փոխանցեց Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանը: Ս. Պատարագը մատուցեց Ուրմիոյ ծխատէր՝ Արժ. Տ. Ներսէս Քնկ. Պատիկեանը, իսկ սքբագան երգեցողութիւնը կատարեց Ուրմիոյ «Նարեկացի» երգչախումբը, ղեկավարութեամբ Տիկ. Աննիկ Իււէֆեան-Սարհադեանի:

Թեմակալ Առաջնորդը իր պատգամը փոխանցելով, Ս. Օննդեան մեծ խորհուրդը բացատրեց պարագային բառերով, իբրեւ Լոյսին յայտնութիւնը եւ մարդկութեան յալիտենապէս խաւար կեանքին լուսատրումը՝ երկնային անիմանալի լոյսի ներկայութեամբ: «Լոյսը Բեթղեհեմի պարգունակ մտարին մէջ հանգչեցաւ, եւ խաւար աշխարհը ու մարդկութեան սիրտը խորհրդանշող մութ գոմը լուսատրուցաւստաւածային լոյսով: Երկրի վրայ խաղաղութիւն եւ մարդոց միջեւ հաշտութիւն աւետեցին հրեշտակները: Այս երկու երեւոյթները ներկայում բացակայում են մեր կեանքից: Ինչքան աղօթելու ենք Աստծուն, որ իր երկնային խաղաղութիւնը պարգեւի այսօր աշխարհի եւ հաշտութիւն գոյացնի մարդկանց միջեւ, փարատելու համար տգիտութեան խաւարը, ինչպէս շարականագիրն է ասում, եւ տառապանքը մեր կեանքից: Որովհետեւ միշտ տգիտութիւնն է առաջին պատճառը, որ դժարութիւն յարուցելու առիթ է տալիս: Տգէտը ըմբոստանում է, տգէտը կրի է ման գալիս, տգէտը արգելքներ փնտրում է բարի աշխատանքը կասեցնելու համար: Այդ տգիտութեան ճար դարձաւ Փրկիչը, իր սուրբ ծննդեամբ այս աւետիսը տալով աշխարհի բոլոր խուլ ականջներին...»: Իր պատգամի ընթացքում, Առաջնորդը կարեւորութեամբ ընդգծեց Ռահւայի Ս. Աստուածաձին պատմական եկեղեցու վերանորոգութեան աշխատանքները ամբողջացնելու կարեւորութիւնը, պետական հնապահպան մարմինների ու մեր ժողովրդի օժանդակութեամբ, որպէսզի



կարելի լինի շուտով կատարել նաև սոյն եկեղեցու վերածուրը: Քրիստոսի Ս. Մկրտությունից՝ Խաչահանգիստից անմիջապես առաջ, Հոգաբարձության անունից պրն. Սամել Բաղալեանը յայտարարեց, թե այս տարւայ Խաչքաւորի պատիւը ընծայած է պրն. Նորիկ Մնացականեանի, որի երկրից բացակայելու պատճառով փոխանորդաբար խաչքաւոր է լինելու պրն. Վիգէն Մկրտչեանը: Խաչքաւոր կանգնեցին նաև պրն. Ինան Աղամեանը եւ պրն. Պետրոս Աղազարեանը: Խաչահանգիստը կատարեց նախագահութեամբ Թեմակալ Առաջնորդի, եւ ապա բոլոր ներկաները Խաչքաւորների ձեռքից համբուրեցին միտոնաբոյր խաչերը:

Յայտնենք, թե մէկ տարուց ի վեր հնադարեան եկեղեցին վերանորոգումի մէջ լինելով, Ս. Պատարագը մատուցեց կողքի ասորական եկեղեցում: Իր այցի առիթով, Թեմակալ Առաջնորդը Հայոց եկեղեցու վերանորոգութեան աշխատանքների մասին տեղեկութիւններ ստացաւ Վերանորոգութեան յանձնախմբի անդամներից, գլխաւորութեամբ պատգամաւորական ժողովի անդամ եւ եկեղեցու նորոգման ճարտարապետ պրն. Կարէն Մկրտչեանի, որը մասնագիտական վերանորոգման մասին բացատրութիւններ տեց եկեղեցու ներսում: Ս. Պատարագից յետոյ, եկեղեցու սրահում սիրոյ սեղան տրեց Ռահայի հոգաբարձութեան եւ խնամակալ մարմնի հիւրընկալութեամբ: Հոգաբարձութեան անունից պրն. Սամել Բաղալեանը բարի գալուստ մաղթեց ու նշեց այն կարիքները որոնք ունի հոգաբարձութիւնը, եկեղեցու նորոգութիւնը աւարտելու համար: Թեմակալ Առաջնորդը այս առթիւ եւս իր գնահատանքը ուղղեց հոգաբարձութեան, Կանանց Միութեան, եկեղեցու վերաշինութեան յանձնախմբի անդամներին, երգչախմբին ու բոլոր ներկաներին: Տեղի ունեցան սրտաբուխ ներատուութիւններ որոնք բոլորն էլ հաւաքեցին եկեղեցու վերանորոգութեան յատուկ գանձանակի մէջ: Տօնական խանդավառ մթնոլորտը իրենց երգերով ճոխացրին պրն. Հայկազ Խոջբախդեանը եւ տիկ. Աննիկ Իսէֆեանը:

**Հայ ժամանակակից գրողների քանաստեղծությունները թարգմանվել են պարսկերեն**



«Հայ ժամանակակից գրողների քանաստեղծությունները թարգմանվել են պարսկերեն», - այդ մասին հաղորդում է իրանական «ԻՄՆԱ» լրատվական նգործակալությունը: Տեղեկատվության մեջ նշվում է, որ իրանահայքանաստեղծ Թաչիկ Թաչերի ջանքերով հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով ստեղծագործող շուրջ 55 հայ ժամանակակից գրողների քանաստեղծությունները թարգմանվել են պարսկերեն:

**Նայաստամ**

**Ադրբեջանցիները գիշերը հարձակվել են մեծ խմբով, սակայն Արմենը նկատել է դիվերսանտներին. մանրամասներ հայ զինվորի սխրանքից**



**Հունվար 20, 2014**

Որոշ մանրամասներ են հայտնի դարձել հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը դարաբաղա-ադրբեջանական սահմանին հակառակորդի դիվերսիոն խմբերի հարձակման ժամանակ փոխհրաձգության հետեւանքով գոհված, 1994թ. ծնված կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանի սխրանքի վերաբերյալ: Ադրբեջանցիները գիշերը հարձակվել են մեծ խմբով, սակայն Արմենը նկատել է դիվերսանտներին, զգուշացրել մեր զինվորներին եւ սկսել դիմադրությունը: Նույնիսկ ծանր վիրավոր վիճակում նա ցած չի ընկրկել եւ շարունակել է դիմադրությունը: Դա հայկական ուժերին հնարավորություն է տվել արագ կազմակերպվել եւ հետ շարտել թշնամուն, պատճառելով մեծ քանակի կորուստներ:

Սվեյլի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը, ժամը 23:50-ից մինչեւ 00:15-ի սահմաններում, դարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծի հյուսիսարեւելյան (Ջրաբերդ) եւ հարավարեւելյան (Կորգան) ուղղություններում՝ արձանագրվել են ադրբեջանական կողմի դիվերսիոն խմբերի ներթափանցման միաժամանակյա փորձեր. մարտական դիրքում իր առջեւ դրված մարտական խնդիրը կատարելու ժամանակ գոհվել էր կրտսեր սերժանտ Արմեն Լեւոնի Հովհաննիսյանը:

**«Նախագահը ևս կազդուրվելու իրավունք ունի. խնդիրը՝ հարցի ճիշտ մատուցումն է».** Սուրեն Սուրենյանց

25 Հունվարի 2014



Քաղաքագետ Սուրեն Սուրենյանցն իր ֆեյսբուքյան էջում գրել է:

«Մերժ Սարգսյանի՝ Հարավային Կորեայում ցողունային բջիջների պատվաստում անցնելու պատմությունը հայտնվեց տեսակետների բախման կիզակետում: Իշխանությունը նեղվում է, որ կորեական ՉԼՄ-ներն այս տեղեկատվությունը տարածել են, ընդդիմախոսները հարցը շահարկում են:

Ես այն կարծիքին եմ, որ բոլոր քաղաքացիներն, այդ թվում՝ նախագահը, կազդուրվելու իրավունք ունի. խնդիրը՝ հարցի ճիշտ մատուցումն է:

Նախագահը բոլոր քաղաքացիներից տարաբերվում է նրանով, որ նրա գործունեությունը, առողջությունը հետաքրքրում են բոլորին, ըստ այդմ՝ հասարակությունը հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունք ունի: Այս պատմության մեջ՝ երկու խնդիր կա: Առաջինն այն է, թե արդյո՞ք նախագահի կանխարգելիչ բուժսպասարկումը տեղի է ունեցել հարկատուների հաշվին: Պաշտոնապես հայտարարվեց ոչ:

Մյուս խնդիրն այն է, որ պաշտոնապես սկզբում հերքվում էր բուժսպասարկման լուրը ու հաստատվեց միայն այն բանից հետո, երբ էլեկտրոնային ՉԼՄ-ներում համապատասխան արտահոսք եղավ:

Պաշտոնական ինֆորմացիոն քաղաքականության այս «հիվանդությունն» է, որ շահարկումների տեղիք է տալիս: Տարբեր երկրների ղեկավարներ դիմում են բժիշկների օգնությանն ու հասարակությունը պատշաճ տեղեկացվում է այդ մասին: Այտեղ ողբերգություն չկա: Մեր պաշտոնական ինֆորմացիա ստեղծողները նույնպես պետք է սովորեն թափանցիկ աշխատել: Ինչևէ, կարևորն այն է, որ կորեական կուրսը նպաստի մեր նախագահի գործունակության բարձրացմանը: Դրանից կշահենք բոլորս»:

HayNews.am

**Արկաղի Ղուկասյանը չի ցանկանում խոսել Մերժ Սարգսյանի հետ Կորեա այցելության եւ բուժման կուրս անցնելու մասին. NEWS.am**

26 Հունվարի 2014



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախկին նախագահ Արկաղի Ղուկասյանը չի ցանկանում խոսել Կորեայում Մերժ Սարգսյանի հետ բուժման կուրս անցնելու մասին, գրում է [NEWS.am](http://NEWS.am)-ը:

NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում Արկաղի Ղուկասյանն ասել է, որ լավ է, լավ է հանգստացել, սակայն չցանկացավ մանրամասնել, թե ինքը ինչ բուժման կուրս է անցել Կորեայում, ինչքան է արժեցել այն: Նա տեղեկացրել է, որ վաղը մեկնում է եւ ի վիճակի չէ խոսել: «Ես հեռախոսով որեւէ հարցի չեմ պատասխանում, եթե ինչ-որ հարցեր ունեք, գրավոր ներկայացրեք, ցտեսություն», - ասել է ԼՂՀ նախկին նախագահը:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանը հունվարի 9-17-ին այցելել է կորեական հիվանդանոց, որտեղ երիտասարդացման բուժման կուրս է անցել:

Ինչպես հաղորդում է [english.chosun.com](http://english.chosun.com)-ը, հիվանդանոց այցելությունների ընթացքում Մերժ Սարգսյանին ուղեկցել է ԼՂՀ նախկին նախագահ Արկաղի Ղուկասյանն ու ռուսաստանցի հայ գործարար Արա Աբրահամյանը: Պատվիրակության ներկայացուցիչները մեկ շաբաթ շարունակ ամեն օր այցելել են հիվանդանոց եւ բուժման կուրս անցել, այդ թվում ցողունային բջիջների, ծերացման դեմ, մերսումների եւ քաշի վերահսկման:

Հիվանդանոցի անձնակազմի խոսքով՝ Սարգսյանին ուղեկցել է ազգային անվտանգության ծառայությունը: Խումբը բուժման համար վճարել է 200 մլն կորեական վոն (մոտ 186 հազար դոլար):

HayNews.am

**Երկրորդ նախագահը մոռանում է, որ օլիգարխիկ համակարգն իր օրոք ձևավորվեց**

13 Հունվարի 2014 թ.



*«Այդ դիտարկումները ես արել էի շատ ավելի վաղ, հիմա նա էլ իրենն է ներկայացրել»,- HayNews.am-ի հետ զրույցում շեշտեց Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Մարգարյանը՝ անդրադառնալով ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի վերջին հարցազրույցում գազային համաձայնագրի հետ կապված դիտարկումներին:*

Արամ Մարգարյանը հիշեցրեց՝ ՄՄ-ին Հայաստանի անդամակցմանը կողմ լինելով անգամ, չի կարող դեմ չլինել այս պայմանագրին. «Ես հատնել եմ մեր կուսակցության տեսակետն այս հարցի հետ կապված: Այն է՝ նման համաձայնագիր կնքելը նվաստացուցիչ է հայկական կողմի համար: Այդ լեզուն, որով գրված էր պայմանագիրը մերը չէ, այն գրել են ռուսները, իսկ մերոնք անգամ մեկ ստորակետ չեն ավելացրել: Հանցանք է նաև գազի գնի հետ կապված փոփոխությունները ժողովրդից գաղտնի պահելը և 300 մլն.-ի պարտք կուտակելը»:

Դիտարկմանը՝ Ռոբերտ Քոչարյանի վերջին շրջանի հարցազրույցային ակտիվությունը վերադարձի նախապատրաստական կամ ստուգողական աշխատանք է և որքանով է այն իրատեսական, ՀԴԿ առաջնորդը մեջբերեց երկրորդ նախագահի միտքը, թե իրեն մտահոգում է երկրի վիճակը. «Ինքը նշել է հարցազրույցում, որ քննադատությունները կապված չեն այս խնդրի հետ, այլ ինքը պարտավոր է ներկայացնել իր դիրքորոշումները վերջին զարգացումների հետ կապված: Նա նախկին նախագահ է և չեմ կարծում, թե անտարբեր պետք է մնար: Այլ հարց է, որ առկա իրավիճակի հետ կապված ինքն էլ իր մեղքի բաժինն ունի: Ինքը Տիգրան Մարգարյանի հետ աշխատել է բավականին երկար ժամանակ: Ավելին՝ այդ տարիներին սկանդալային մի գործարք եղավ. երկրի պահուստից 14 տոննա ոսկի վաճառվեց, սրա պատասխանատուն 2-ն են՝ և Ռոբերտ Քոչարյանը, և Տիգրան Մարգարյանը: Թե ինչ եղավ այդ գումարը, ինչպես է, որ ոսկին թողնվ փոխարինվեց, այդպես էլ չչարգաբանվեց: Այնպես որ իմ դիտարկմամբ՝ երկու կողմն էլ իրեն քննադատաբար պետք է մոտենա:

Ինչքան էլ ասենք տնտեսական աճ և այլն, բայց սոցիալական բևեռեցման հիմքը դրվեց Քոչարյանի ժամանակ, հիմա պարզապես այն գնալով սրվում է: Երկրորդ նախագահը մոռանում է, որ օլիգարխիկ համակարգն իր օրոք ձևավորվեց, ուստի վերադառնա, թե չվերադառնա...պետք է նախ հաշվետու լինի, սա վերաբերվում է նաև Լևոն Տեր-Պետրոսյանին՝ արդյոք իրավունք ունե՞ն վերադառնալու հայտ ներկայացնելու»: Այս համատեքստում անդրադառնալով այն տեսակետներին, թե Ռոբերտ Քոչարյանն ավելի շատ տնտեսական գործիչ է, քան քաղաքական, Արամ Մարգարյանը շեշտեց՝ Քոչարյանը ոչ միայն տնտեսագետի, այլև դիվանագետի հատկություններ ունի և, որ սրանում համոզվել է նրա հետ աշխատելու ժամանակ: Այլ հարց է, որքանով են այդ կարողություններն ի շահ երկրի օգտագործվել:

«Ցավոք, այդ իր կարողությունները ծուռ հունով գնացին. ինքը, երբ դարձավ վարչապետ կարճ ժամանակում, իսկապես, լուրջ քայլեր արեց, բայց երբ դարձավ նախագահ արդեն լրիվ ուրիշ ճանապարհ բռնեց: Նա տնտեսական գործընթացներում մեծ նշանակություն էր տալիս փողին, ճիշտ է առանց դրա չի լինում տնտեսություն, բայց նախագահին հարիր չի ամեն գնով փող վաստակելը: Մա հաշվի առնելով միանշանակ չես կարող ասել, որ եթե նա տնտեսական կարողություններ ունի, ուրեմն...այստեղ շատ կարևոր է, թե ինչպես են այդ կարողություններն օգտագործվում», - ամփոփեց Մարգարյանը:

HayNews.am

**«Երեք նախագահներին էլ քաղաքական արենայից պետք է հեռացնել. երկրում ստեղծված իրավիճակի համար պատասխանատու են երեքն էլ**

18 Դեկտեմբերի 2013 թ.



*ՀՀ երեք նախագահները պետք է դուրս մղվեն քաղաքական արենայից, որովհետև երկրում ստեղծված իրավիճակի համար պատասխանատու են երեքն էլ՝ մեկը մի քիչ շատ, մյուսը՝ ավելի քիչ:*

Այսօր լրագրողների հետ հանդիպմանը նման կարծիք հայտնեց «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանը:

Ըստ նրա՝ առաջինը նախագահը 2008-ին



հնարավորություն ունենալ իշխանության գալու և շտկելու անցյալի սխալները, բայց չստացվեց: Ի՞նչ պատճառով՝ չցանկացավ, թե չկարողացավ, չի կարող ասել: Փոխարենը հստակ է՝ երկրորդ և երրորդ նախագահները, բացի ասպարեզը լքելուց, պետք է նաև պատասխանատվության ենթարկվեն իրենց արածների համար, հատկապես՝ Ռոբերտ Քոչարյանը: Իսկ ո՞վ կամ ո՞ր ուժը կարող է հեռացնել քաղաքական արենայից Հայաստանի երեք նախագահներին, արդյո՞ք Նիկոլ Փաշինյանի հիմնած «Քաղաքացիական պայմանագիր» միավորումը, Պետրոս Մակեյանը նկատեց. «Ոչ այս միավորումը, ոչ էլ անգամ ընդդիմադիր բոլոր ուժերը միասին չեն կարող պարտադրել նրանց, եթե չկարողանան համախմբել հասարակությանը: Այսօր կա ակտիվ զանգված, կան մարդիկ, որոնք ուզում են արտագաղթել, բայց դեռ երկրում են, նրանց հետ պետք է ճիշտ աշխատանք տարվի: Իսկ սա նշանակում է՝ հրաժարվել պայքարից, ժողովրդին փողոց դուրս բերելու հին ձևերից»:

Հարցին՝ «Ժողովրդավարական հայրենիք»-ը կհամագործակցի՞ «Քաղաքացիական պայմանագիր» միավորման հետ, Պետրոս Մակեյանը հիշելով Նիկոլ Փաշինյանի և Սասուն Միքայելյանի հետ անցած դժվարին ճանապարհը, շեշտեց, որ այսուհետ յուրաքանչյուր շարժման միանալու են նախապայմաններով. «Մենք միշտ եղել ենք շարժումների առաջին շարքերում՝ առանց նախապայմանների և անկախ նրանից, թե ով է առաջնորդը: Այսուհետև առանց նախապայմանների մեր կուսակցությունը չի համագործակցելու»:

Այս համատեքստում Մակեյանը նշեց, որ չի մասնակցել ՀԱԿ կուսակցության նախաձեռնած երթին, որովհետև այլևս այդ միավորմանը չի աջակցում, այնտեղ իր համար անընդունելի մարդիկ կան, որոնք իշխանական շատ անհատներից չեն տարբերվում:

HayNews.am

**«Սոցիալապես անապահով ընտանիքների համար գազի գինը 156-ի փոխարեն կկազմի 100 դրամ».**  
**վարչապետ**

23 Հունվարի 2014 թ.



*Հայաստանի կառավարությունը կշարունակի փոխհատուցել սոցիալապես անապահով ընտանիքների սպառած գազի գնի մի մասը:*

Այսպես՝ մեկ խորանարդ մետր գազի համար 156 դրամի փոխարեն անապահով ընտանիքները կվճարեն 100 դրամ: Այդ մասին ՀՀ կառավարության նիստում

հայտարարեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Վարչապետը ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարներին հանձնարարեց պատրաստել համապատասխան որոշում և ներկայացնել այն կառավարությանը, որպեսզի շարունակեն սոցիալապես խոցելի խավերին օժանդակել և նրանց համար գազի գնի բարձրացում տեղի չունենա: Որոշումը կառավարություն կներկայացվի մեկ շաբաթվա ընթացքում:

**ՀՀ Նախագահին իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ-ում Կանադայի դեսպանը**

25/01/2014



**Նախագահ Սերժ Սարգսյանին այսօր իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանի Հանրապետությունում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Քյորը:**

Նախագահը շնորհավորել է դեսպանին նշանակման կապակցությամբ և հաջողություններ մաղթել մեր երկրում դիվանագիտական առաքելությունն իրականացնելու գործում: Հանդիպմանը երկուստեք գոհունակությամբ է ընդգծվել, որ հայ-կանադական հարաբերություններն ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերում դինամիկ զարգանում են: Նախագահը նշել է, որ որոշակի աշխուժություն կա նաև առևտրատնտեսական հարաբերություններում: Սերժ Սարգսյանը և դեսպան Քյորը համակարծիք են եղել, որ հիմնական հարցերի շուրջ երկու երկրները էական տարածայնություններ չունեն և արդյունավետ փոխգործակցում են միջազգային կառույցներում: Այդ ամենը, նրանց համոզմամբ, նաև բարեկամ հայ և կանադացի ժողովուրդների միջև գոյություն ունեցող փոխադարձ համակրանքի, Կանադայի հասարակական-քաղաքական կյանքում իր որոշակի ներդրումն ունեցող կանադահայ համայնքի շնորհիվ է: Զրուցակիցները քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում համագործակցությունը զարգացնելու, առկա ներուժը լիարժեքորեն օգտագործելու և հայ-կանադական հարաբերություններն առավել ամրապնդելու հնարավորությունները: Այդ գործում Նախագահը մեծապես կարևորել է նորանշանակ դեսպան Ջոն Քյորի դերը և հաջողություններ մաղթել նրան իր պատասխանատու աշխատանքում:

HayNews.am

**Արցախ**

**ԼՂՀ նախագահի մամուլի քարտուղար.  
Ադրբեջանի դրոշը կարող է հայտնվել  
Լեռնային Ղարաբաղում՝ միայն  
դեսպանատան տանիքին**



Հունվարի 21, 2014 թ.

Ադրբեջանի դրոշն իսկապես կարող է, եւ նույնիսկ պետք է հայտնվի Լեռնային Ղարաբաղում: Սակայն միայն այդ երկրի դեսպանատան տանիքին: Այդ մասին հայտարարել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի մամուլի քարտուղար Դավիթ Բաբայանը՝ NEWS.am-ի թղթակցի խնդրանքով մեկնաբանելով «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնք» հասարակական միավորման նախագահ Բայրամ Սաֆարովի հերթական հայտարարությունն այն մասին, որ «Ադրբեջանի եռագույն դրոշը ծածանվելու է Լեռնային Ղարաբաղում»:

«Ադրբեջանի դրոշը պետք է ծածանվի Լեռնային Ղարաբաղում իր դեսպանատան տանիքից: Մենք բազմիցս են խոսել այդ մասին, եւ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման ամենակարճ եղանակն ենք համարում: Մեր հերթին մենք պատրաստ ենք տեղ հատկացնել դեսպանությանը Շուշիում, Ստեփանակերտում կամ մեկ այլ վայրում, որտեղ որ նպատակահարմար կգտնենք»,- նշել է Դավիթ Բաբայանը:

Սակայն, հավելել է նա, եթե Բայրամ Սաֆարովը համարում է, որ Ադրբեջանի դրոշը կարող է հայտնվել ԼՂՀ-ում պատերազմի հետեւանքով, նա չարաչար սխալվում է: «Պատերազմի դեպքում ղարաբաղյան եռագույնը կհայտնվի Բաքվում՝ նախագահի նստավայրի վերելում եւ բոլոր կարեւոր հաստատությունների գլխավերելում: Իսկ անձամբ Բայրամին, եթե պատերազմ սկսելու հույս ունի, խորհուրդ եմ տալիս սկսել հայերեն սովորել: Հակառակ դեպքում այդ գործիչը պարզապես առանց աշխատանքի կմնա»,- եզրափակել է մամուլի քարտուղարը:

**Արեւմտյան Հայաստան**

**Բոլորս Հրանտ ենք, բոլորս հայ ենք.  
Ստամբուլում հազարավորները հարգել  
են Դինքի հիշատակը**

Հունվարի 20, 2014 թ.

Թուրքիայի տարբեր քաղաքներում Հրանտ Դինքի սպանության 7-րդ տարելիցին տեղի են ունեցել սգո եւ բողոքի միջոցառումներ, որոնցից գլխավորը տեղի է ունեցել Ստամբուլում:

Ստամբուլի Թաքսիմ հրապարակում, հունվարի 19-ին, 13:30-ին, հավաքվել են հազարավոր քաղաքացիներ, Հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ, արվեստագետներ եւ քաղաքական գործիչներ: Կարճ ելույթներից հետո հավաքվածները երթով շարժվել են դեպի «Ակոս» պարբերականի խմբագրություն, որի դիմաց 7 տարի առաջ սպանվեց Հրանտ Դինքը:

Սգո միջոցառման երթի մասնակիցների ձեռքերին եղել է պաստառներ. «Բոլորս Հրանտ ենք, բոլորս հայ ենք», «Հրանտի համար, արդարության համար», «Այստեղ ենք, ախպարիկ» եւ այլն:

Նշենք, որ 2007 թվականի հունվարի 19-ին, ժամը 15:05-ին Հրանտ Դինքը սպանվել է Ակոսի խմբագրության դիմաց: Տեղի ունեցող շոու դատավարությունները դեռեւս չեն բացահայտել սպանության կազմակերպիչներին:







**CNN-ը պատմել է Ադթամար կղզու հայկական Սուրբ Խաչ եկեղեցու մասին. Վանա լիճը հայկական թագավորության մեջ էր մտնում**



**Հունվարի 17, 2014 թ.**

Ամերիկյան CNN հեռուստաալիքը իր կայքում Թուրքիայի վեց քիչ հայտնի տեսարժան վայրերի մասին ռեպորտաժում պատմել է նաև Վանա լճի Ադթամար կղզում հայկական Սուրբ Խաչ եկեղեցու մասին: «Շատ այցելուներ Թուրքիայում հաճախ տեսնում են Միջերկրական ծովափնյա գեղեցիկ, մարդաշատ վայրերը կամ Ստամբուլի մեծ մզկիթներն ու պալատները: Սակայն երկիրը մեծ է, կան շատ այլ տեսարժան վայրեր», - նշում են ռեպորտաժի հեղինակները:



Ինչ վերաբերում է Վանա լճին, ապա ռեպորտաժում նշվում է, որ լիճն ունի մինչև 400 մետր խորություն և մոտ 120 կմ երկարություն, կարող է համարվել ներքին ծով: «Այն չունի ելք դեպի ծով, սակայն ջրերը հարուստ են հանքային աղերով, որոնք ջրին կաթնային կապույտ գույն են հաղորդում: Ավելի քան 1000 տարի առաջ լիճը Հայկական թագավորության մաս էր կազմում: Հին հայկական Սուրբ Խաչ եկեղեցին Ադթամար կղզում լճի ափից գտնվում է 3 կմ հեռավորության վրա, զարդարված է հիանալի որմնանկարներով ու քանդակներով, որոնք վերջին ժամանակներում վերականգնվել են», - պատմել է CNN-ը:



**Դերսիմում հայկական ավերված եկեղեցում հարգել են Հրանտ Դինքի հիշատակը**



Հունվար 20, 2014

Թուրքիայի Թունջելի (Դերսիմ) նահանգի Հոզաթի շրջանի Էրզենի գյուղում գտնվող հայկական ավերված Սուրբ Հարություն եկեղեցում հավաքվածները հարգել են Հրանտ Դինքի սպանության 7-րդ տարելիցը:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ի փոխանցմամբ՝ Հոզաթի քաղաքապետը, քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության անդամներ եւ տեղի բնակիչներ հունվարի 19-ին հավաքվել են Էրզեն գյուղի հայկական ավերված Սուրբ Հարություն եկեղեցում եւ սգո միջոցառում իրականացրել Հրանտ Դինքի հիշատակին:

Մասնակիցները Դինքի նկարի առաջ մոմ են վառել, որից հետո մասնակիցներից մեկը հանդես է եկել հայտարարությամբ եւ պահել՝ «Հրանտի համար, արդարության համար» գրությունը:

**Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցում հայերը նշել են Սուրբ Ծնունդը**

Հունվարի 08, 2014 թ.

Թուրքիայի հարավ-արեւելյան Դիարբեքի (Տիգրանակերտ) քաղաքի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցում նշել են Սուրբ Ծնունդը:

Թուրքական Demokrather կայքի փոխանցմամբ՝ Դիարբեքիի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցում Սուրբ Ծնունդի պատարագին մասնակցել են ԱՄՆ-ից Դիարբեքի տեղափոխված հայտնի հայ երաժիշտ Երվանդ Բոսթանջըն, Սուրբ Կիրակոս եկեղեցու խորհրդի քարտուղար Գաֆուր Թուրքայր, տուրիզմի խորհրդատուներ, հայ լրագրող Ավետիս եւ այլ մասնակիցներ:

Նշենք, որ 1400 աղոթատեղի ունեցող Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցին կառուցվել է 1376 թվականին, Հանչեփեք թաղամասում, որը տեղի մահմեդականները անվանել են «գյավուրների թաղամաս» քանի որ մեծ թվով քրիստոնյաներ են ապրել մինչեւ Հայոց ցեղասպանությունը:

Սուրբ Կիրակոս եկեղեցին 1980-ից թողնվել է բախտի քմահաճույքին: Այնուհետ, Ստամբուլում ապրող դիարբեքիցի հայերը ստեղծել են «Սուրբ Կիրակոս հիմնադրամ»՝ վերանորոգելու եկեղեցին: 2,5 մլն դոլար արժողությամբ վերանորոգման ծախսերի 70 տոկոսը իր վրա է վերցրել հայկական հիմնադրամը, իսկ 30-ը՝ Դիարբեքիի քաղաքապետարանը:

**Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցում հարգել են Հրանտ Դինքի հիշատակը**



Հունվարի 20, 2014թ.

Թուրքիայի հարավ-արեւելքում գտնվող Դիարբեքի քաղաքի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցում հունվարի 19-ին հարգել են Հրանտ Դինքի հիշատակը:

Թուրքական Ozelhaberler կայքի փոխանցմամբ՝ Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցում Հրանտ Դինքի սպանության 7-րդ տարելիցի կապակցությամբ հիշատակի միջոցառում է տեղի ունեցել: Միջոցառման մասնակիցներից հայտնի հայ երաժիշտ Երվանդ Բոսթանջըն նշել է, թե շատ է ցավում, որ իրենք հայկական եկեղեցում հավաքվել են ցավալի առիթով:

Հանդիպմանը մասնակցել է նաեւ դիարբեքիցի հայ գրող Մկրտիչ Մարկոսյանը:

**Թուրք կուսակցապետը հայերի հետ մասնակցել է Սուրբ Ծնունդի պատարագին եւ հայերենով շնորհավորել**

Հունվարի 08, 2014թ.

Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» (CHP) կուսակցության փոխնախագահ Էրդողան Թոփրաքը հունվարի 6-ին, Ստամբուլի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցում մասնակցել է Սուրբ Ծնունդի պատարագին:

Թուրքական Demokrather կայքի փոխանցմամբ՝ «Ժողովրդահանրապետական» կուսակցության փոխնախագահ Էրդողան Թոփրաքն այցելել է



Ստամբուլի հայկական Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի, հայերենով շնորհավորել ներկաներին՝ ասելով.



«շնորհավոր Սուրբ Զատիկ»: Այնուհետ Էրզրոյան Թուրքաքը մասնակցել է Պոլսո հայոց պատրիարքական փոխանորդ, արք. Արամ Աթեշյանի գլխավորությամբ իրականացվող պատարագին: Ստամբուլի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցում անցկացված պատարագին մասնակցել է նաև Թուրքիայի հրեաների հոգևոր առաջնորդ Իսհակ Հալեան:

## Թուրքիայում շարունակում են կարևորել հայերենի ուսուցումը



Հունվարի 25, 2014թ.

Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ Մեթին Հուլագուն հայտարարել է, թե Թուրքիայում հայերենի ուսուցումը կարևորում են ոչ միայն 2015-ից առաջ այլ նաև դրանից հետո եւս:

Թուրքական Anadolu գործակալության հետ գրույցում Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ Մեթին Հուլագուն նշել է, թե Թուրքիայի ուսանողները եւ գիտական աշխատանք գրողները շարունակում են հետաքրքրվել հայերենով: Հուլագուն նշել է, թե իրենք հայերենի ուսուցումը սկսել են ոչ միայն մոտեցող Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ: «Մենք

հայերենի ուսուցումը կարեորում ենք ոչ միայն 2015-ի համար, այլ նաև երկարաժամկետ նախագծերում»,-ասել է Մեթին Հուլագուն:

Նշենք, որ 2012 թվականին հայ եւ թուրք լրագրողների հետ հանդիպման ժամանակ Մեթին Հուլագուն տիաճ իրավիճակում էր հայտնվել՝ Հայոց ցեղասպանությունը ժխտող ծիծաղելի առարկությունների պատճառով: Նույնիսկ հանդիպմանը ներկա թուրք լրագրողները ծիծաղել էին Հուլագուի ասածների վրա:

## Թուրք կուսակցապետը Դինքի անունով փողոց վերանվանելու առաջարկ է ներկայացրել խորհրդարան



Հունվարի 20, 2014թ.

Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» (CHP) կուսակցության փոխնախագահ Սեզգին Թանրըքուլուն երկրի խորհրդարանին առաջարկ է ներկայացրել, որով պահանջվում է Շիշլիի շրջանում գտնվող փողոցներից մեկը վերանվանել է Հրանտ Դինքի անունով:

Թուրքական Vatan պարբերականի փոխանցմամբ՝ CHP-ի փոխնախագահ Սեզգին Թանրըքուլուն Շիշլիի շրջանի սահմաններում գտնվող փողոցներից մեկը Հրանտ Դինքի անունով կոչելու համար գրավոր առաջարկը ներկայացրել է խորհրդարանի նախագահությանը:

Առաջարկի մեջ պահանջվում է փոփոխություններ կատարել Ստամբուլի քաղաքապետարանի մասին օրենքում, որի արդյունքում հնարավոր կլինի Շիշլիի փողոցներից մեկը վերանվանել Դինքի անունով:

Նշենք, որ CHP-ն նախկինում եւս նման առաջարկներ արել էր, սակայն իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության անդամների կողմից այն մերժվել էր: Հիշեցնենք, որ ամեն տարի Դինքի սպանության տարելիցին սգո միջոցառման մասնակիցները հանում են «Էրզենեկոն» պողոտայի ցուցանակը եւ ամրացնում «Հրանտ Դինքի» պողոտա ցուցանակը:



**Թուրքագետ. Թուրքիան պետք է նախապատրաստվի Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին**



**Յունվարի 17, 2014թ.**

Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախօրեին Թուրքիայի քայլերը բնական են: Այս մասին հունվարի 17-ի մամուլի ասուլիսում հայտարարել է թուրքագետ Մուշեղ Խուդավերդյանը:

Նա նշել է, որ անկախ երկրի ներքին իրավիճակից, Թուրքիան պետք է նախապատրաստվի Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Ըստ նրա՝ 100-ամյա տարելիցի նախօրեին նորից կբարձրանա հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, եւ շատ երկրներ կփորձեն այդ հարցն օգտագործել Թուրքիայի դեմ: «Ցավոք, շատ երկրներ Ցեղասպանության ճանաչման հարցը բարձրացնում են ոչ այնքան համամարդկային արժեքներից ելնելով, որքան իրենց շահերի համար՝ Թուրքիային ճնշելու նպատակով», - հավելել է թուրքագետը:

**Թուրքագետ. Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում ԱՄՆ-ն մի օր էլ հաղթաթուղթ չի ունենա՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու**

**Հունվարի 20, 2014թ.**

Հայ թուրքագետ Արտակ Շաքարյանը չի կարծում, որ ԱՄՆ-ն կճանաչի Հայոց ցեղասպանությունը, որպեսզի պատժի Թուրքիային: Այս մասին նա հայտարարել է այսօր կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:

Ըստ նրա՝ Թուրքիայում լրատվամիջոցների ներկայացուցիչների ձեռքակալություններն ու ճնշումները, սկանդալները՝ կապված կոռուպցիայի հետ, վատ են ընկալվում ԱՄՆ-ում, քանի որ ԱՄՆ-ում տիրող կարծիքն այն մասին, որ Թուրքիան ժողովրդավարական մոդել է աշխարհի մյուս մահմեդական երկրների համար, փաստացի տապալվել են:



Թուրքագետը վստահ է, որ եթե ԱՄՆ-ն մի օր ճանաչի Հայոց ցեղասպանությունը, ապա դա լրացուցիչ հաղթաթուղթ չի լինի՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու:

**Թուրքիայում հայը վերադարձել է հայրական տուն եւ սկսել ձիթապտղի յուղի օճառի արտադրություն**



**Դեկտեմբերի 20, 2013թ.**

Թուրքիայի արեւելքում PKK-ի եւ թուրք զինվորականների միջեւ բախումների հետեւանքով հեռացած հայազգի Ջեքերիա Մաբունջուն վերադարձել է հայրենի Դերիկ գյուղ եւ սկսել իր պապերի գործը:

Թուրքական MgdTV կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայի հարավ-արեւելյան Մարդին նահանգի Դերիկ գյուղից 23 տարի առաջ հեռացած Ջեքերիա Մաբունջուն վերադարձել է հայրական տուն, վերանորոգել այն եւ սկսել պապերի տնկած ձիթենիներից հավաքել պտուղները եւ քամված յուղով օճառներ պատրաստել: Ջեքերիան իր խոսքում նշել է, թե 1990-ականներին շրջանում տեղի ունեցող բռնությունների հետեւանքով հայ ընտանիքները հեռացել են եվրոպական երկրներ կամ Ստամբուլ: «Ես կարոտել էի իմ հայրենքի, իմ տունը, դրա համար էլ Դերիկ եկա: Ինչպես հասկանում եք իմ ազգանունից, իմ հայրն էլ, պապն էլ զբաղվել են օճառագործությամբ: Իմ տան մի մասը դարձրել եմ արտադրամաս եւ սկսել եմ իմ պապերի գործն անել», -

նշել է Զեքերիան՝ ասելով, որ եթե գործերը լավ ընթանան, մի մեծ արտադրամաս է կառուցելու:

**Լեհ քաղաքագետ. Հայոց  
ցեղասպանության ճանաչման խնդիրը  
Թուրքիայում նախընտրական  
քարոզարշավի օրակարգային հարց  
կդառնա**



**Յունվարի 06, 2014թ.**

Թուրքիան Ադրբեջանի գերին է, ուստի Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը եւ ցյուրիխյան արձանագրությունների իրականացումը քիչ հավանական են: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտարարել է Աշխարհաքաղաքական վերլուծության եվրոպական կենտրոնի գլխավոր տնօրեն, քաղաքական գիտությունների թեկնածու Մատեուշ Պիսկորսկին:

«Կարծում եմ, 2014 թ.-ին Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ որակական փոփոխություններ պետք չէ ակնկալել: Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուի դեկտեմբերյան այցը, ամենայն հավանականությամբ, խորհրդանշական բնույթ էր կրում. Անկարան մտադիր էր ցույց տալ իր պատրաստակամությունը երկխոսության, քանի որ այդ էր պահանջում ամերիկյան դաշնակիցը», - ընդգծել է Լեհ քաղաքագետը: Նրա խոսքով՝ հաշվի առնելով թուրքական ընտրարշավների օրացույցը՝ 2014թ.-ի նախագահական ընտրությունները եւ 2015թ.-ի խորհրդարանական ընտրությունները, Երեւանի հետ հարաբերությունների ջերմացմանն ուղղված որեւէ իրական քայլ պետք չէ ակնկալել: «Մա վերաբերում է նաեւ 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին: Ամենայն հավանականությամբ, այդ հարցը կդառնա նախընտրական քարոզարշավի օրակարգային հարց», - եզրափակել է Մատեուշ Պիսկորսկին:

Հիշեցնենք, որ հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացը սառեցվել է Թուրքիայի առաջ քաշած նախապայմանների պատճառով՝ կապված նախկինում ձեռք բերված համաձայնություններում դարաբաղյան հարցի առիթով խախտումների հետ:

**Հրանտ Դինքի նվիրված ֆորումին 11  
կետանոց պահանջ է ընդունվել**



**Յունվարի 20, 2014թ.**

«Հրանտ Դինքի սպանության 2015-ի հեռանկարին» ոգեկոչման ֆորումի ժամանակ 15 կետանոց պահանջ է ընդունվել:

Այս NEWS.am-ին հայտնեցին «Արեւմտահայոց Ազգային» համագումարից: Պահանջը ներկայացնում ենք ըստ կետերի.

1. Ճանաչում, ներողություն եւ հատուցում
2. Վերջ տալ պատմության ժխտման գործողություններին
3. Անձանագիր եւ քաղաքացիություն
4. Վերադարձ եւ վերաբնակեցում
5. Հասանելի դարձնել ծխական արխիվները եւ վերջ տալ գործող սահմանափակումներին
6. Հասանելի դարձնել Օսմանյան արխիվները, ներառյալ զինված ուժերի արխիվները
7. Լքյալ գույքի արձանագրությունների բացահայտում
8. Քաղաքական եւ առեւտրային հաստատությունների տրամադրությանը հանձնված գույքեր
9. Դեռեւս պետության տրամադրության հանձնված գույքեր
10. Բացահայտել առեւանգված կանանց եւ որբերին
11. Հավաքական պատասխանատվություն:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ 2014թ-ի հունվարի 19-ին սպանված Հրանտ Դինքի սպանության յոթերորդ տարելիցին ընդառաջ, հունվարի 18-ին, «Անկարայի մտքի ազատություն» կենտրոնը եւ «Արեւմտահայոց Ազգային համագումարը» ոգեշնչման ֆորում են կազմակերպելու: Այս NEWS.am-ին հայտնել էին «Արեւմտահայոց Ազգային» համագումարից:

Նրանց փոխանցմամբ՝ իրենք այդկերպ հարգանքի տուրք են մատուցելու Դինքի հիշատակին եւ եւս մեկ անգամ լուսարձակի տակ բերելու նրա կյանքն ու գործունեությունը: «Հանրաձանաչ մտավորականներ եւ Մարդու իրավունքների ոլորտում գործիչներ մտքեր կփոխանակեն Հրանտ Դինքի սպանության դատավարության ընթացքի եւ Թուրքիայի ժողովրդավարացման գործընթացների վերաբերյալ: Նրանք համատեղ կխորհեն են նաեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ եւ դրան առնչվող պատմական, իրավական եւ բարոյական խնդիրների լուծման հեռանկարների մասին», - ասված էր հայտարարության մեջ:

**Հրապարակվել է Մտամբուլի հայկական  
Էլիտայի մասին գրքի թուրքական  
թարգմանությունը**



**Հունվարի 18, 2014թ.**

Մտամբուլի «Արաս» հրատարակչությունը հրատարակել է Հակոբ Բարսումյանի «Մտամբուլի ամիրաների խավը» գիրքը: Այս մասին գրում է «The Armenian Weekly»-ն: Իրավապաշտպան Այշե Գյունայսուն, ով եւս պրոֆեսիոնալ թարգմանիչ է, հավատարմագրել է գիրքը եւ հրապարակում պատրաստել:

Գիրքը հրատարակել է Հայաստանի ամերիկյան համալսարանը 2007-ին: Դա Հակոբ Բարսումյանի դոկտորական թեզն է, որը նա պաշտպանել է 1980 թվականին Կոլումբիայի համալսարանում:

Գիրքը պատմում է ազդեցիկ էլիտայի մասին՝ ներկայացնելով նրա վերելքը, գերիշխանությունն ու անկումը: Հետազոտության մեջ քննարկվում է գոնետիկ կապն այդ էլիտար ընտանիքների միջեւ, ինչպես նաեւ նրանց խաղացած դերը իշխանության հետ հարաբերություններում:

**Մտամբուլում քանդել են  
Ցեղասպանությունից փրկված հայ  
ընտանիքի տունը եւ նրանց թողել  
փողոցում**

**Հունվարի 12, 2014թ.**

Մտամբուլի Օրթաքոյ թաղամասում բնակվող Համբարձում եւ Ժանետ ամուսիններին պատկանող տունը քաղաքապետարանի աշխատակիցները քանդել են՝ առանց ընտանիքին նոր տնով կամ գումարով ապահովելու երաշխիքներ տալու:

Թուրքական Taraf-ի փոխանցմամբ՝ 1915-ին Ցեղասպանությունից փրկվելով Համբարձում Սուլարբաշի հայրը՝ Հովհաննես Սուլարբաշը Յոզգաթից տեղափոխվել էր Մտամբուլ եւ գնել Օրթաքոյ թաղամասի Դերեբոյու պողոտայի վրա գտնվող մի տուն: Ընտանիքը տարիներ ի վեր վճարել է տան հետ կապված բոլոր կոմունալ եւ հարակից վճարները, սակայն Մտամբուլի

քաղաքապետարանը որոշում է կայացրել քանդել հայ ընտանիքին եւ եւս 4 ընտանիքի պատկանող տները՝ տեղում այլ շինություն կառուցելու համար: Զավեշտալին այն է եղել, որ հայ ընտանիքին առաջարկել են 74 հազար լիրա վճարել եւ տեղափոխվել Քաղըթհանե թաղամասում կառուցված բնակարաններից մեկը:



Համբարձում Սուլարբաշը փորձել է ճար գտնել եւ խոսել է իրենց տան տեղում շենք կառուցող ընկերության տնօրենի հետ, որի ժամանակ որոշվել է մյուս հարեւանների հետ էլ քննարկել իրավիճակը եւ հասնել համաձայնության, սակայն քաղաքապետարանի աշխատակիցները այդ ամենը հաշվի չեն առել: Քաղաքապետարանի աշխատակիցները մտել են հայ ընտանիքի տուն, իրերը դուրս հանել եւ առանց բառ լսելու քանդել տունը:

Փողոցում հայտնված հայ ընտանիքի հայր Համբարձումը նշել է, թե իրենք դեմ չեն, որ այդտեղ շենք կառուցվի, սակայն իրենց ուզածն է, որ այդ շենքում իրենց բնակարան հատկացնի:

**Վանի Բերկրիի ջրվեժը սառել է**



**Հունվարի 23, 2014թ.**

Թուրքիայի արեւելքում եւս անսխառեպ ցրտերի հետեւանքով Բերկրիի ջրվեժը եւս սառցակալել է: Տարվա տաք եղանակներին զբոսաշրջիկներին ձգող Բերկրիի ջրվեժը յուրահատուկ գեղեցկություն է ներկայացնում նաեւ ձմռանը՝ սառած վիճակում:




Մոտ 15 մետր բարձրությունից գահավիժող ջրի շիթերի մի մասը ցառցակալել են՝ ստեղծելով գեղեցիկ սպիտակ տեսարան:

Նշենք, որ Բերկրիի ջրվեժը (ներկայումս անվանվում է Մուրադիյե) գտնվում է Բերկրի գետի վրա, որն իր հերթին սկիզբ է առնում Թոնդրակ լեռից, հոսում Վասպուրականի լեռներին զուգահեռ, անցնելով 65 կմ տարածություն եւ թափվում Վանա լիճը: Բերկրիի ջրվեժը գտնվում է Վան քաղաքից 90 կմ հեռավորության վրա:



## Ցեղասպանության մասին պատմում են Անկարայի հայերը. նոր գիրք Թուրքիայում



Հունվարի 19, 2014թ.

Թուրքիայում բանավոր պատմության նախագծի շրջանակներում լույս է տեսել Ցեղասպանության ժամանակ Անկարայի հայերի հետ տեղի ունեցած դեպքերի մասին պատմող գիրք:

Թուրքական T24.com կայքի փոխանցմամբ՝ «Լռության ձայնը» խորագրի 3-րդ գիրքը կոչվում է «Խոսում են Անկարայի հայերը», որում Անկարայի 10 հայ ներկայացրել իրենց պատմությունները 1915 թվականի հետ կապված:

«Լռության ձայնը» նախագիծը սկսվել է 2011 թվականին՝ «Խոսում են Դիարբեքիի հայերը» գրքի հրատարակումով: «Խոսում են Դիարբեքիի հայերը» գիրքը կազմված է եղել 2 հատորից:

## Միջազգային

### ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով խորհուրդն ընդունել է ցեղասպանությունների կանխարգելման մասին Երեւանի նախաձեռնած բանաձեւը



**Հունվարի 22, 2014 թ.**

Մարտի 22-ին ժնեւում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 22-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունվել է Հայաստանի նախաձեռնությամբ առաջադրված ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձեւը: Այս մասին նշված է Հայաստանի ԱԳՆ 2013 թվականի հաշվետվության մեջ:

Հաշվետվությունում նաեւ ասվում է, որ ԱԳՆ եւ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից շարունակվել են աշխատանքներ իրականացվել ի կատարումն Ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի ստեղծման մասին ՀՀ նախագահի հրամանագրի:

ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ակտիվ աջակցությամբ Հայոց Ցեղասպանության 98-րդ տարեկիցի կապակցությամբ բազմաթիվ երկրներում անցկացվել են ոգեկոչման եւ հիշատակի հարյուրավոր միջոցառումներ, կազմակերպվել են կոնֆերանսներ եւ ցուցահանդեսներ:

### Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու վրացական հատվածի 31 տոկոսը կառուցված է

**Հունվարի 10, 2014թ.**

Վրաստանի էկոնոմիկայի նախարարությունում Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցման աշխատանքներին նվիրված հանդիպում է կայացել, հայտնում են նշված նախարարությունից:

Վրաստանի փոխվարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլիի գլխավորած հանդիպման ընթացքում քննարկվել են 2013թ. երկաթգծի շինարարության հաշվետվությունը, ինչպես նաեւ ընթացիկ տարում անցկացվելիք միջոցառումները:



Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային նախագիծը նախատեսում է Վրաստանում 153 կմ-անոց Մարաբդա-Կարցախի հատվածի վերակառուցում եւ Ախալքալաքից մինչեւ Թուրքիայի սահման 27 կմ-անոց երկաթգծի կառուցում:

Այս պահի դրությամբ վրացական հատվածի 31 տոկոսը կառուցված է:

Նախարարությունից հայտնել են, որ մոտ ապագայում նախատեսված է վրաց-ադրբեջանական Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային նախագծի համակարգող խորհրդի երկկողմ հերթական հանդիպումը, որի ընթացքում կքննարկվեն ֆինանսական եւ տեխնիկական հարցեր, հայտնում է «Գոուզիա Online»-ը:

### Օջալանը ողջունել է Հրանտ Դինքի պայքարը եւ խոստացել նրա մահվան տարեկիցին ուղերձով հանդես գալ



**Հունվարի 13, 2014թ.**

Թուրքիայի Իմրալը կղզու բանտ այցելած եւ PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի հետ հանդիպած քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» (BDP) կուսակցության պատգամավորներ Փերվին Բուլքանը, Իդրիս Բալուքեն եւ Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության (HDP) պատգամավոր Սըրրը Սուրեյա Օնդերը հրապարակել են Օջալանի հետ անցկացրած հանդիպման մի քանի մանրամասներ:

Թուրքական Haberturk-ի փոխանցմամբ՝ BDP-ի եւ HDP-ի պատգամավորների հետ հանդիպմանը Աբդուլլահ Օջալանը խոսել է նաեւ Ստամբուլի հայկական «Ակոս» շաբաթաթերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքից: Ըստ պատգամավորների, Օջալանն ասել է. «Հայ ժողովրդի արժանավոր զավակ, մեր եղբայր Հրանտ



Դինքի հիշատակը հարգում եմ եւ ողջունում նրա մղած պայքարը»:

Օջալանի հետ հանդիպած պատգամավորները շեշտել են, թե Օջալանը պատրաստվում է Հրանտ Դինքի սպանության տարելիցին լայնածավալ ուղերձով հանդես գալ:

**Ֆրանսուա Օլանդը մտադիր է հանդիպել Հրանտ Դինքի այրուն**



**Հունվարի 24, 2014թ.**

Թուրքիա կատարած այցելության ընթացքում Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը մտադիր է հանդիպել «Ակոս» թերթի սպանված խմբագիր Հրանտ Դինքի այրուն՝ Ռաքել Դինքին, հաղորդում է «Hurriyet Daily News»-ը:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ Ֆրանսուա Օլանդը Թուրքիա կայցելի հունվարի 27-28-ին:

Հիշեցնենք, որ Ստամբուլում լույս տեսնող հայկական «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը սպանվել է 2007 թվականի հունվարի 19-ին՝ ազգայնական Օզյուն Սամասթի կողմից: 2014-ի սկզբին այդ գործով դատաքննությունը վերսկսվել է Ստամբուլի դատարաններից մեկում:

**Հայկական մեղալ ստացած թուրք գործիչը Ստամբուլի քաղաքապետ է առաջադրվել**

**Դեկտեմբերի 03, 2013թ.**

Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցության առաջնորդ Քեմալ Քըլըչդարոլուն ԱՄՆ կատարած այցի ժամանակ հայտարարել է, թե Ստամբուլի քաղաքապետի իրենց թեկնածուն Մուսթաֆա Սարըգյուլն է:

Թուրքական OdaTV կայքի փոխանցմամբ՝ հանդիպումների համար ԱՄՆ-ում գտնվող «Ժողովրդահանրապետական» կուսակցության նախագահ Քեմալ Քըլըչդարոլուն Վաշինգտոնում իրականացրել է իր գլխավորած կուսակցության ներկայացուցչության բացումը, որի ժամանակ հայտարարել է, թե Ստամբուլի քաղաքապետի իրենց թեկնածուն հայտնի է՝ տալով

Շիշլիի ներկայիս քաղաքապետ Մուսթաֆա Սարըգյուլի անունը:



Նշենք, որ Մուսթաֆա Սարըգյուլը առաջին թուրք քաղաքապետն է, ով Ստամբուլի հայկական եկեղեցիների, դպրոցների վերանորոգման եւ ազգային փոքրամասնությունների միջոցառումներին աջակցելու համար Պոլստ հայոց պատրիարքարանի կողմից Հովհաննես Կոլոտ պատրիարքի անունով հատուկ մեղալ է ստացել: «Ձեզի շատ գսիրեմ»,-իր շնորհակալական խոսքում հայերենով ասել էր Մուսթաֆա Սարըգյուլը:

**Մշակույթ**

**Սարդարապատի թանգարանը կարդիականացվի նոր տեխնոլոգիաներով**

25 Հունվարի 2014 - 23:21



Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության «Սարդարապատ» ազգային թանգարանի առաջնային խնդիրներից է տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումը: «Արմենայրես» լրատվական գործակալության նախաձեռնությամբ՝ լրագրողների հետ հանդիպմանը թանգարանի տնօրեն Կարեն Արիստակեսյանը նշել է, որ հաստատության առաջիկա ծրագրերից է նոր ցուցադրության հայեցակարգի ստեղծումն ու նոր ցուցադրության փուլային կայացումը: «Այս հարցում մեզ կօգնեն նոր տեխնոլոգիաները, որոնք շատ կարևոր են թանգարանների հավաքածուները և



առարկաները հանրամատչելի դարձնելու առումով»,- նշեց Արիստակեսյանը: Սա ենթադրում է նաև համապատասխան մասնագետի առկայություն, ով կվարի թանգարանային հավաքածուի էլեկտրոնային շտեմարանը:

Տնօրենն այս նորարարությունը կարևոր համարեց հատկապես այն առումով, որ այսօր թանգարանի պահոցները վերածվել են պահեստների, իսկ թանգարանը պահեստավորման խնդիր պիտի չունենա, այլ ունենա լավ դասակարգված պահոցներ, լավ մշակված հարցարաններ, այդ թվում՝ էլեկտրոնային, և վարի գիտական արդյունավետ ու համակարգված գործունեություն:


Ըստ տնօրենի՝ թանգարանային առարկաները, նմուշները պետք է «կենդանացվեն», ինչը հնարավոր է ֆիլմերի, երաժշտության ներմուծման միջոցով: Մասնավորապես, ֆինանսական միջոցների առկայության պարագայում (10 միլիոն 500 հազար դրամ) թանգարանը ծրագրել է նոր ցուցադրություն կազմակերպել ազգային նվագարանների հնչեցմամբ, որն այցելուներին հնարավորություն կտա ծանոթանալ հայ ազգային երաժշտությանը և ավելի կաշխուժացնի թանգարանային կյանքը: Հաստատությունում պահվում է նվագարանների ամենամեծ հավաքածուն, որ ժամանակին բերվել է հավաքվել է այլ թանգարաններից: Նախատեսվում է առաջիկա տարիներին թանգարանում ունենալ նաև աուդիոգրիների ծառայություն, ինչպես նաև տոմսերի էլեկտրոնային վաճառք: «Կարծում եմ, որ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների մասով մենք հնարավորություն կունենանք համագործակցել Orange Armenia-ի հետ»,- ավելացրեց նա: 2013 թ-ին թանգարանն ունեցել է 25784 այցելու: 2004 թվականից ի վեր այցելուների թիվն աճել է երկու անգամ: Թանգարանային գործունեությունը գնահատելու համար ընդունված է հաշվի առնել երկու ցուցանիշ՝ այցելուների քանակը և թանգարանային հավաքածուների ու առարկաների մատչելիությունը հասարակությանը: Սարդարապատի թանգարանն արդեն համալրվել է Հայաստանում առաջին թանգարանային մոնիտորով, որով ցուցադրվում է Հայկական լեռնաշխարհի՝ փոխարինելով Հայկական լեռնաշխարհի մակետին: Վերջինը, ըստ Արիստակեսյանի, ժամանակավրեպ և գիտական առումով խոցելի էր: Ապագայում նման մոնիտոր նախատեսվում է ունենալ թանգարանի մուտքի մոտ, որը համակարգչային ցանցի միջոցով կապահովի պահոցների ցուցադրումը, և կլինի պահուստային ֆոնդի բացօթյա յուրատեսակ ցուցադրություն: «Այս ուղղությամբ քայլեր արդեն կատարվել են, սակայն չպետք է բավարարվենք ձեռք բերածով, այլ առաջնորդվենք թանգարանների միջազգային ու առաջավոր փորձով: Այս առումով անելիքները շատ-շատ են»,- հավելեց նա:

Լրատվամիջոցների ներկայացուցիչների համար մինչ ասուլիսը շրջայց կազմակերպվեց թանգարանի ցուցադրահներում և պահուստային ֆոնդերում:

Թանգարանը, որի ճարտարապետն է Ռաֆայել Իսրայելյանը, բացվել է 1978թ.: Այնտեղ ներկայացվում է հայ ժողովրդի էթնիկ մշակույթը և մայիսյան հերոսամարտերը: 2012թ-ի հունվարի 1-ից Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանը համարվում է Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM) հիմնական անդամ: Թանգարանում գիտաօժանդակ նյութի հետ միասին պահպանվում է շուրջ 73934 մշակութային արժեք: 6500 քմ ցուցադրական մակերեսի վրա ներկայացվում է հայերի նյութական, սոցիալական ու հոգևոր մշակույթը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Թանգարանում կազմակերպվում են հայոց ավանդական և ժամանակակից արվեստին, ինչպես նաև այլ ժողովուրդների էթնիկ մշակույթին վերաբերող ցուցահանդեսներ:

HayNews.am

**Գերմանիային չէր հուզում Թուրքիայում հայերի սպանությունը. Նոր գիրքը պատմում է նրա մասնակցության մասին Հայոց ցեղասպանությանը**



**Յունվարի 12, 2014թ.**

1915թ.-ի դեկտեմբերի 7-ին Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան կոմս Վոլֆ-Մետերնիխը կայսերական կանցլեր Թեոբալդ ֆոն Բեթման-Նոլվեգին ուղղված նամակում գրում է. «Հայերի հետապնդման շուրջ մեր դժգոհությունը պետք է հստակ արտահայտվի տպագիր մամուլում, պետք է վերջ դնել թուրքերի հանդեպ մեր սիրահարվածությանը»: Կանցլերը պատասխանել է. «Պատերազմի ընթացքում դաշնակցի առաջարկովոդ հրապարակային նկատողությունը կդառնա նախադեպը չունեցող գործողություն: Մեր միակ նպատակն է Թուրքիային պահել մեր կողքին մինչև պատերազմի ավարտը՝ անկախ նրանից, հայերը կմեռնեն դրա հետևանքով, թե ոչ»:

Ինչպես գրում է «Asbarez»-ը, Տորոնտոյում Ջորյանի ինստիտուտը հայտարարել է «Հայերի ցեղասպանությունը. վկայություններ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվներից»:

1915-1916թթ.» գրքի անգլալեզու տարբերակի հրատարակության մասին, որը նախկինում կազմել ու խմբագրել է Վոլֆգանգ Հուստը: Գրքում առկա են հարյուրավոր հեռագրեր, նամակներ ու հաշվետվություններ, որոնք գերմանացի պաշտոնյաներն Օսմանյան կայսրությունից ուղարկել է Բեռլին, որոնցում առկա են ցնցող մանրամասներ Հայոց ցեղասպանության իրականացման մասին: Այդ փաստաթղթերը վկայում են երիտթուրքերի միանշանակ ցանկության մասին ցեղասպանություն գործել եւ գերմանական կառավարության պաշտոնական լուր համաձայնության ու մասնակցության մասին:

## Մահացել է դիրիժոր Արամ Ղարաբեկյանը



**Հունվարի 11, 2014թ.**

Կյանքի 59-րդ տարում մահացել է անվանի հայ դիրիժոր Արամ Ղարաբեկյանը: Մշակույթի նախարարությունից հայտնեցին, որ Արամ Ղարաբեկյանը հանկարծամահ է եղել Միացյալ Նահանգներում:

Արամ Ղարաբեկյանը ծնվել էր 1955թ. հուլիսի 7-ին, Բոստոնում: Սովորել է Բոստոնի «New England» կոնսերվատորիայում, որից հետո ուսումը շարունակել է Գերմանիայի Մայնց քաղաքում: Դիրիժորական արվեստ է սովորել Ֆրանկո Ֆերարայի մոտ: 1979թ. Գերմանիայում եղել է հանրահայտ Ս.Չելիբիդակեի աշակերտը: Սովորել է նաև Ջ.Դրոզմանի եւ Լ.Բերնշտայնի մոտ: Եղել է Հայաստանի պետական Կամերային նվագախմբի ղեկավարն ու դիրիժորը:

1983թ. հիմնել է Բոստոնի «Սինֆոնովա» նվագախումբը, որը ղեկավարել է մինչ 1991թ.: Աշխատել է Կիեւի ռադիո եւ հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախմբի հետ եւ միասին թողարկել է «Ռոմեո եւ Ջուլիետ» սկավառակը, որից հետո Ուկրաինայի մշակույթի նախարարը դիրիժորին նշանակել է իր գլխավոր խորհրդական: Ղեկավարել է նաև Ուկրաինայի ազգային սիմֆոնիկ նվագախումբը ու Օպերայի եւ բալետի թատրոնը: Աշխատել է նաև Ջագրեբի սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ որպես հրավիրված դիրիժոր: Հետագայում ղեկավարել է մի շարք նվագախմբեր՝ Հայաստանի եւ Ֆրեզնոյի

ֆիլհարմոնիկ, Շրեվեպորտի, Հանգչոուի եւ Ջեջիանգի սիմֆոնիկ:

1999թ. ամանորի նախաշեմին 6 տարբեր երկրներից կազմված նվագախմբով հանդես է եկել նոր հազարամյակին նվիրված համերգային ծրագրով, Չինաստանի Հանչժոու քաղաքում, որտեղ ներկայացրել է Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան:

1988թ. արժանացել է ամերիկյան կոմպոզիտորների, հեղինակների եւ խմբագիրների (ASCAP) մրցանակին, 1989թ.՝ Լյուսիեն Վոլսինի մրցանակին: Արժանացել է նաև Հարվարդի ասոցիացիայի երաժշտական մրցանակին, 2007թ.՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչմանը:

## Մահացել է Լեւոն Խեչոյանը

08 Հունվարի 2014թ.



*Մահացել է արձակագիր, ազատամարտիկ Լեւոն Խեչոյանը:*

Լույսը ցավակցում է Խեչոյանի ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին:

Նշենք, որ նա ծնվել էր 1955 թվականին՝ դեկտեմբերի 8-ին: 2000 թ. «Մն գիրք, ծանր բզեզ» վեպի համար արժանացել է ՀՀ պետական «Ոսկե եղեգն» մրցանակին: Մասնակցել է Արցախյան պատերազմին:

## Մոտեր

### Մեր Անցած Ճամփան

*Թ. Ղարախանյան Սիրակցի*

Մոտեցանք մեծ երկաթյա դարպասին որտեղ սպասում էին քալանթարներ՝ Թաթևոս մեծ պապս, Սկրտում Մանսուրյանը, Մամուռանի գյուղապետը, տեղիս Աղբուլաղի գյուղապետը, նոր դպրոցի երկու շինարար վարպետները եւ մեզանից առաջ վազվզող գյուղի սուրբ գիրք ՂՈՐԱՆ կարդացող «Մաշտոցի միրզա Ռեզա Սաֆֆարին, որը զարդարված ՂՈՐԱՆը ձեռքին պիտի ամեն ներս մտողի զլխին օրինանք կարդար եւ չար միտք ու աչքը հեռացներ՝ իր ասութեամբ՝ ներս մտնողների շունչը **հալալացներ**: Ջուռնային նշան արի դադարեն, պաշտոնական հյուրերը մոտեցան մուտքին... մտքիս մեջ մտածում էի որ երանի թե նախքան մօտենալը մերոնք իրենց ձեռքով ինչպես որ գիտեն բարձրաստիճան հյուրերին մի հարգանքի շարժում անեն,

բայց ուրախության չափ չկար երբ հյուրերը մուտքին մտնեցին, ծեր ու ջահել, իբր հարգանքի նշան բոլորն էլ գլխարկները վերցրին եվ պահեցին իրենց դռնին ու ես մի քիչ էլ զգացված՝ անուներով ծանոթացրի... սկսեցի թաքտուս մեծ պապիցս. պարսկերենով ներկայացրի... «*ջեմար Թաթավուս Լարախանյան, փեղար բողբոջ է մոխրաբամ է ինջաներ վա ջաղ անդար ջաղ քալանթար դարիյե Սիրաք Չարմահալ* – այսինքն. մեծ պապիս անունը տալով, սերունդե սերունդ Քալանթար Սիրաք գյուղի Գյուղապետ»... եվ զգացի որ սիրտս զմփաց երբ պաշտոնեա հյուրերը պապիս ձեռքը սեղմելիս կրկնում էին «Մեծ պատիվ ունենք քեզ հանդիպելու որ զինվոր Լարախանյանը քո Թոռն է» եվ թաքտուս մեծ պապս մի ձեռքը դռնին մյուս ձեռքը գլխարկը ձեռքին, թաշկինակ չունեի երջանիկ արցունքի կաթիլները սրբեր, իր գլխարկի պոչով մաքրեց աչքերում լցված հուզմունքը... «*մոֆթախարամ...-պարծանք ունեմ այս հանդիպման»* ասելով գալով հուզմունքը ես գլխարկը դռնին գլխով խոնարհվում...մանապես քալանթար Սկրտում Մանսուրյանին –Սկրտում Քեռուն- ներկայացնելիս նա էլ հուզվեց ասելով «*պարսկ. Խէյլի խոշիալ ամ, համչի չիզի խեյլի վախտ նաղիղամ* - անչափ ուրախ եմ, էսպես բան երկար ժամանկ չէի տեսել»: Ամենքին ծանոթացնելով բոլորն էլ հարգվեցին, վերջինը կտուր սարքով վարպետն էր որ իր Թիշնիզ գյուղի ակսենթով ասաց «*խոշվաղթոմ քե ի դաստան է դուագա դրախտ մոն է մաշուր քերդ, ախամդոլլահ քարոմ ջաղ քերդ* -ասեց թե բախտավոր եմ էս կտուր ծածկելու պատմության բերումով ճանաչվեցի եվ գործերս այստեղ գալուց հետո շատ է հաջողել... ամենքը գլուխները բարձրացրին դպրոցի ծածկը նայելով եվ գեղեցիկ ու մաքուր ծածկի գերաները տեսնելով իմացողները խնդացին որովհետեւ գիտեին այդ գեղեցեկ գերանները գյուղի որ բաղաչայից էր կտրած բերած եւ չիմացողներն էլ զարմացան, հրճվեցին եվ հետաքրքիր հարցերով դիտեցին բոլոր դասարանները եվ ուսուցչի սենյակը եւ ուրախ ու զվարթ տրամադրությամբ մտան՝ արդեն փռած ու պատրաստ ուտելիքներով հսկա սփռոցի առջեւ: Կառավարության պաշտոնյաներին եւ դուրսից եկած հյուրորդին եւ քալանթարներին մի կողմ նստացրի մյուսներին էլ մյուս կողմ, գուռնան էլ դադարեցրի, եւ ճաշի սպասարկողները անցան իրենց գործին, արդեն փլավի ու արդար յուղի բուրմունքը գոգոմ էր սոված ախորժակներ եւ մածունի ու պանրի կողքին դատարկ պնակները լցվում էին համով պլավներով եվ ոչխարի մտով պատրաստած կառիով: Կանայք որ ներկա չէին իրենց բաժինը դրկվեց գյուղապետի տանը մի մեծ ամանի մեջ, եւ իհարկե գյուղի խանութպան փլավ սարքողին եւ գյուղի պահակ -դաշտվանին- ապասպրել էի որ հյուրերից հետո, ինչքան որ կերակուր մնաց գյուղի մզկիթը տեղափոխեն եւ բաժանեն աշակերտների մեջ եւ գյուղի ճանաչված կարիքավորներին: Խրախճանքի, խոսքի ու գրույցի պակաս չկար եւ բարձր տրամադրության տակ մինչեւ իրիկնապահ կեր ու խումով եւ տաք տաք գրույցներով ժամանակը անցավ:

Ուտելիքների ամանների գրնգոցը եւ թեյի թասերի չրխկոցն էլ դադարել էր եւ բարձր տրամադրության ներքո ամեն մարդ իր անցյալի հաջողակ դիպվածներից էին պատմում ու իրար պատմությունները սիրելով քահ-քահ ծիծաղում ու քեֆ անում: Անդրադառնալով ուրախ մթնոլորտը գուռնա դիտյուն նշան արի հանդարդ եղանակներ նվազեն: Պարսիկ կանայք գյուղի կտուրներին կանգնած իրենց խրախճանքը հայտնելով քի-լի-լի էին կանչում:

Աղբուլաղ Չարմահալ գավառի այս հին հայկական եւ նոր պարսկական գյուղը նոր դպրոց ուներ....



Պահապան

Վահիկ Բաղդասարյան

**Թամար Փանոսյան  
Շայերեն-պարսկերեն առածանի**

زبانزدهای ارمنی-فارسی  
تالیف تامار پانوسیان

111-Էլի էն կուծը, էլի էն բրդոջը:

همان آش است و همان کاسه.



112-Մարդ կա տերտեր է սիրում մարդ կա տերտերակին:

لیلی را از دریچه چشم محنون بین.



113-Գինի խմողը կը հարբի:

هر که خربزه خورد پای لرزش هم ایستد.



114-Հին զվալին թագա օղակ:

آفتابه خرج لحم است.

115-Քնածն ու մեռածը՝ դիվի մեկ է:

خواب برادر مرگ است. خواب است و مرگ.



## دستیار ویژه رئیس‌جمهور در بازدید از درمانگاه خیریه ارامنه: واژه اقلیت را نمی‌پسندم

آراکس نیوز



دستیار ویژه رئیس‌جمهور صبح ۸ دی ماه یعنی دو روز فرا رسیدن سال نو میلادی در جریان بازدید از درمانگاه خیریه آودسیان (درمانگاه ارامنه در نارمک) در جمع مسئولان و پرسنل این خیریه، اعلام کرد که هدیه رئیس‌جمهور به این درمانگاه بنا به پیشنهاد وزیر بهداشت، کمک یک میلیارد تومانی است. به گزارش خبرنگار خبرگزاری دانشجویان ایران (ایسنا)، حسین فریدون در ابتدای سخنان خود با اشاره به همزمانی این ایام سالروز تولد حضرت مسیح (ع) و سال نو میلادی و تبریک این ایام به هموطنان ارمنی، گفت: "واژه اقلیت را نمی‌پسندم و به نظرم مناسب است که برای این دوستان از واژه ایرانی غیرمسلمان استفاده کنیم".

وی در ادامه با اشاره به زندگی مسالمت‌آمیز مسلمانان و غیرمسلمانان با یکدیگر در ایران، تصریح کرد: "زندگی مسالمت‌آمیز مسلمانان و غیرمسلمانان با یکدیگر در ایران بهترین الگو برای منطقه پراشویی است که ما در آن زندگی می‌کنیم".

دستیار ویژه رئیس‌جمهور با بیان این که در ایران مسلمانان و غیرمسلمانان با احترام، با عقاید و مراسم‌های مختلف یکدیگر برخورد می‌کنند، یادآور شد: "دکتر روحانی عنایت خاصی به این ایامی که در آن قرار داریم داشتند و همان‌طور که از رسانه‌ها نیز مشاهده کردیم چند روز قبل به دیدار خانواده شهدای ارامنه رفتند".

وی با اشاره به فداکاری‌های ارامنه در دفاع مقدس، گفت: "این نشان می‌دهد که ما همه در روزگار سخت و گرفتاری‌ها در کنار هم هستیم و عقاید و آداب و رسوم مختلف مانع اتحاد ما نیست".

فریدون تأکید کرد: "در ادامه این نگاه به پیشنهاد آقای هاشمی وزیر بهداشت قرار شد کمکی به حل گرفتاری‌های این درمانگاه داشته باشیم و هدیه رئیس‌جمهور به این درمانگاه بنا به پیشنهاد وزیر بهداشت یک میلیارد تومان است".

به گزارش ایسنا، پس از پایان سخنان دستیار ویژه رئیس‌جمهور، سرژیک آزاریان رئیس هیات امنای این درمانگاه خیریه، گفت: در این ایام بچه‌های ما منتظرند تا ببینند بابا نوئل برای آنها چه هدیه‌ای می‌آورد و ما نیز از هدیه رئیس‌جمهور اطلاعی نداشتیم و خیلی برای ما غیرمنتظره بود.

وی در ادامه از رئیس‌جمهور به خاطر چنین کمکی تشکر و قدردانی کرد. همچنین در این مراسم روبرت بیگلریان نماینده ارامنه نیز خطاب به حسین فریدون و وزیر بهداشت، گفت: "سلام ما را به رئیس‌جمهور برسانید و حسن و ظن ایشان تشکر و تقدیر کنید".

بر اساس این گزارش، گفتنی است در سال ۸۲ ساختمان کنونی این خیریه که پیش از این در خیابان سمیه بوده به پایان رسید و در سال ۱۳۸۳ مجوز فعالیت گرفت. آودسیان بنا به گفته مسئولان این خیریه به یک دانشجوی ۲۴ ساله بود که بر اثر بیماری آپاندیس فوت کرد و سپس خانواده وی جهت گرامیداشت یاد او

این خیریه را با عنوان وی ایجاد کردند. در مراسم بازدید از درمانگاه آودسیان علاوه بر حسین فریدون دستیار ویژه رئیس‌جمهور، هاشمی وزیر بهداشت، پیوندی رئیس دانشگاه علوم پزشکی شهید بهشتی، روبرت بیگلریان نماینده ارامنه و تعدادی از مقامات شورای خلیفه‌گری ارامنه تهران و شمال و ... حضور داشتند و رئیس هیات امنای این خیریه توضیحات لازم را در جریان بازدید از بخش‌های مختلف این خیریه ارائه کرد.

همچنین در جریان این بازدید با حضور دستیار ویژه رئیس‌جمهور و وزیر بهداشت، لوح تقدیری به رئیس هیات امنای این خیریه اهدا شد.

## شکنجه اسرای ارمنی توسط جمهوری آذربایجان

آراکس نیوز 23/12/2013



"بقیا هونانیان" سربراز ارتش ارمنستان که به همراه دو سربراز دیگر در سال ۲۰۰۳ میلادی به اسارت جمهوری آذربایجان درآمده بود در گفتگو با نشریه "ژوقورت" (مردم) ارمنستان اعلام کرده است که در دوران اسارت توسط ماموران جمهوری آذربایجان مورد شکنجه قرار می‌گرفتند و حکومت باکو آن‌ها را مجبور می‌کرد که یا زندگی در جمهوری آذربایجان را بپذیرند و یا به کشوری ثالث (به جز ارمنستان و روسیه) پناهنده شوند.

## کارشناس آذری: چرخش موضع آمریکا به نفع ارمنستان در مساله قره باغ



'مبارز احمد اوغلو' کارشناس سیاسی و رئیس 'مرکز فنون و نوآوری‌های سیاسی' در جمهوری آذربایجان برخی رفتارهای دستگاه دیپلماتیک آمریکا را نشانگر چرخش ناگهانی و قاطعانه این کشور به نفع ارمنستان در مناقشه قره باغ دانست.

به نوشته روزنامه 'اکسپرس' چاپ باکو، این کارشناس آذری در یک نشست مطبوعاتی در باکو گفت که آمریکا حمایت خود از ارمنستان را افزایش داده است و قصد دارد از مناقشه قره باغ در مبارزه با روسیه استفاده کند.

وی از افزایش فعالیت‌های دیپلماتیک 'جان هفرن' سفیر آمریکا در ارمنستان و توصیه‌های 'جان کری' وزیر امور خارجه آمریکا به نماینده جدید این کشور در گروه مینسک مبنی بر تجدید نظر در روند مذاکرات صلح به عنوان نمونه‌هایی دال بر رویکرد جدید آمریکا در منطقه یاد کرد.

## "مایکروسافت" در صدد توسعه همکاری های خود با ارمنستان



نمایندگی کورپوراسیون "مایکروسافت" در ارمنستان در صدد رشد و توسعه همکاری های خود با ارمنستان در سال ۲۰۱۴ میلادی می باشد. انتظار می رود که سال آینده روابط و همکاری های دفتر کورپوراسیون "مایکروسافت" و نمایندگان تجارت کوچک و متوسط رشد و گسترش یابد. با بیان این مطلب "گریگور بارسقیان" رییس دفتر مذکور اعلام کرده است که طی سال آینده همکاری های دوجانبه در زمینه های فناوری تکنولوژی نیز رشد و توسعه خواهد یافت.

## باکو نگران عضویت ارمنستان در اتحادیه گمرکی

"علی حسن اف" مدیر شعبه سیاسی و اجتماعی نهاد ریاست جمهوری آذربایجان اعلام نموده است که دولت باکو به طور رسمی مخالف عضویت ارمنستان در اتحادیه گمرکی می باشد و در این خصوص ابراز نارضایتی کرده است.

با بیان این مطلب "علی حسن اف" به خبرنگار خبرگزاری "ترند" گفته است که دولت باکو نگران این می باشد که بعد از عضویت ارمنستان در اتحادیه گمرکی، قره باغ به توسعه همکاری های سیاسی و اقتصادی خود با ارمنستان ادامه خواهد داد.

## انتقاد رییس شورای ایالت کالیفرنیا از رویه جمهوری آذربایجان علیه آرتساخ (قره باغ)

آراکس نیوز



در پی آنکه جمهوری آذربایجان اعلام کرد که آن دسته از اعضای شورای ایالت مذکور که به جمهوری قره باغ سفر کرده اند اجازه ورود به جمهوری آذربایجان نخواهند یافت. "جون پرس" رییس شورای ایالت کالیفرنیا با انتقاد از این اقدام جمهوری آذربایجان از باکو خواست نام وی را نیز در "لیست سیاه" (!) افراد ممنوع ورود به جمهوری آذربایجان قرار دهد.

این کارشناس با بیان این که سیاست آمریکا در منطقه، از جمله طولانی شدن روند حل و فصل مناقشه قره باغ کوهستانی به ضرر واشنگتن است، افزود: یکی از ابزارهای آمریکا در منطقه قفقاز جنوبی، امکانات ساختمان سفارت این کشور در ارمنستان است. این ساختمان یکی از بزرگ ترین سفارت خانه ها در سراسر جهان است و روسیه می تواند این ساختمان را که ۳۰۰ الی ۴۰۰ تفرنگدار دریایی آمریکا را در خود جای داده است، تعطیل کند و بدین ترتیب به منافع آمریکا در قفقاز جنوبی لطمه بزند.

به عقیده این کارشناس آذری، گرایش آمریکا به سمت ارمنستان در روند حل و فصل مناقشه قره باغ ادامه خواهد یافت و این موضع حتی به سایر کشورهای منطقه نیز سرایت خواهد کرد. بنابراین تحولات یاد شده باید پیامدهای مهمی برای جمهوری آذربایجان داشته باشد.

## افزایش گردشگران ارمنستان



بر اساس برنامه ۲۰۱۴ "خدمات حمایت از گردشگری"، انتظار می رود تعداد گردشگران بازدید کننده از ارمنستان با ۱۰ درصد افزایش یابد.

این برنامه طی نشست ادواری هیئت دولت ارمنستان در تاریخ بیست و ششم ماه جاری میلادی مورد بحث و تبادل نظر قرار خواهد گرفت. باید تاکید کرد این که پروژه مطابق با اهداف سیاست دولتی می باشد و در صدد بالا بردن سطح رقابتی زمینه های گردشگری در بازار بین المللی و تمدید دوره گردشگری می باشد.

## ارمنستان دعوت به عضویت در منطقه مشترک حمل و نقل هوایی اروپا را پذیرفت



ارمنستان دعوت اتحادیه اروپا جهت مذاکره در مورد عضویت به منطقه مشترک حمل و نقل هوایی اروپا را قبول کرده است. در این مورد در گزارش منتشره از سوی بنیاد رقابت ملی ارمنستان تحت عنوان "اجرای خطوط هوایی پایدار و رقابتی" تاکید می شود.

## واکنش باکو به تلاش ایالت کالیفرنیا برای تصویب قانونی در رابطه با قره باغ



باکو- ایرنا- وزارت امور خارجه جمهوری آذربایجان در رابطه با قطعنامه پیشنهادی ایالت کالیفرنیا آمریکا به ارگانهای قانونگذاری این کشور در راستای شناسایی قره باغ به عنوان یک کشور مستقل واکنش نشان داد.

'المان عبدالله اف' سخنگوی وزارت خارجه آذربایجان روز چهارشنبه در مصاحبه با خبرگزاری آذری 'آپا' گفت: 'سیاست خارجه آمریکا نه از سوی ایالتها بلکه از سوی دولت فدرال تعیین می شود و وظیفه قانونگذاران دفاع از حقوق بشر ، اصول و موازین حقوق بین المللی است.'

سخنگوی وزارت خارجه آذربایجان با اشاره به اینکه 'مایک گاتو' ارایه کننده این پیشنهاد همکاری خود با لابی ارمنی را کتمان نمی کند و در سایت رسمی خود نیز به این مساله اشاره کرده است، افزود: 'ارزشهای انسانی و حقوق بشر باید در اولویت قرار بگیرد و فدای مطامع سیاسی شخصی نشود.'

وی تاکید کرد: آمریکا از تمامیت ارضی جمهوری آذربایجان حمایت می کند و یکی از کشورهای عضو شورای امنیت سازمان ملل است که اشغال اراضی آذربایجان را محکوم کرده است.'

به گفته عبدالله اف، نادیده گرفته شدن همه این مسایل از سوی مایک گاتو نشان دهنده تبعیت وی از لابی ارمنی و اولویت دادن به منافع شخصی از طرف وی است .

## در گذرگاه تاریخ

منبع: مجموعه اسناد تاریخی نژادکشی ارمنیان در امپراتوری عثمانی - ایروان ۱۹۹۱  
گردآوری و ویرایش: پرفسور آکادمیسین م.گ. نرسیسیان  
ترجمه: ادیک باغداساریان (ا.گرماتیک)

### بخشی از مقاله روزنامه پراودا (۱۹۱۲)

#### در باره رویدادهای ترکیه

شماره ۹۳، ۱۷ اوت ۱۹۱۲



... ترکان جوان آبرو و حیثیت خود را در انتظار مردم امپراتوری از دست داده اند. حکومت آنان صرفاً بر پایه اعمال خشونت آمیز زور قرار دارد. اقشار تهیدست ترکیه و اقوام و ملیت های تحت حکومت آنان و علی رقم وجود «پارلمان» تحت فشار قرار دارند و چون گذشته نابود می شوند.



وحشیگری های ددمنشانه ، رشوه دهی و رشوه خواری رژیم جدید گویی هیچ فرقی با روزهای حکومت «سلطان خونخوار» ندارد.

ماهنامه ارمنی - فارسی زبان

## لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر

ادیک باغداساریان

نشانی نشریه: تهران صندوق پستی ۹۴۸۸-۱۵۸۷۵

پست الکترونیکی: [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)

نشانی اینترنت: [www.louysonline.com](http://www.louysonline.com)

چاپ احسان- تهران خیابان انقلاب شماره ۱۱۴۸ کدپستی ۶۳۵۶۱-۱۳۱۵۷ تلفن ۶۶۴۹۵۷۶۱

۲۸ صفحه تکشماره ۵۰۰ تومان

اشتراک مجله: تکشماره ۵۰۰ تومان. ایران یک سال ۶۰۰۰ تومان خارج ۵۰ دلار

شماره حساب: تکشماره ۱۴۰۶۸۶۴۹۲ بانک تجارت شعبه مجیدیه سه راه ارامنه

- ♦ مقالات و دیدگاه های مندرج در ماهنامه «لویس» لزوماً بیانگر موضع مدیر مسئول و هیئت سردبیری نیست.
- ♦ مقالات ، عکس ها و مطالب رسیده باز گردانده نمی شود.
- ♦ نشریه در حکم و اصلاح مقاله ها مجاز است.
- ♦ استفاده از مطالب «ماهنامه لویس» با ذکر ماخذ آزاد است.



**Լույս են տեսել**

**Էդիկ Բաղդասարյանի**

**ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը 10 ՀԱՏՈՐՈՎ  
ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը**

**7 հատորով**

**Հայ-պարսիկ դարավոր բարեկամությունը (պարսկերեն)**

**دوستی دیرینه ایرانیان و ارمنیان**

**ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը՝  
(պարսկերեն) 2 ՀԱՏՈՐՈՎ**

**تاریخ ارمنیان ایران - جلد اول و دوم**

**Աղվանք, Ադրբեջան, Ոճրագործությունն եւ Ծավալապաշտություն**

**ارآن، آذربایجان، جنایت و توسعه طلبی (Պարսկերեն)**



**Պատվիրելու համար դիմել [edbagh@yahoo.com](mailto:edbagh@yahoo.com)**

**1-647-204-2414**

**1-818-627-8643**